

**ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՈՒ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ.
1877– 1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ
ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՔԱՐՈՂՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Գևորգ Վարդանյան

Հայոց ցեղասպանությունն ունի հայերի նկատմամբ իրականացված հետապնդումներով և կոտորածներով հարուստ նախապատմություն, որը չի սահմանափակվում միայն 1890-ական թթ. կոտորածներով: Այս առումով հետազոտողները քիչ ուշադրություն են դարձրել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում տեղի ունեցած մարտական գործողություններին ուղեկցող անցքերին: Դա պայմանավորված էր Բալկանյան ճակատի առաջնակարգ կարևորությամբ, մյուս կողմից այդ նույն ժամանակահատվածում, ինչպես նաև դրանից մեկ-երկու տարի առաջ տեղի ունեցած բուլղարական դեպքերի արձագանքները կարծես թե «ստվերել» էին Կովկասյան ճակատի դեպքերը:

Այս հոդվածում քննարկվում են վերոհիշյալ պատերազմի Կովկասյան ճակատում ռազմական գործողություններին զուգահեռ տեղի ունեցած իրադարձությունները՝ որպես օսմանյան «քարոզչամեթոդների նյութ»: Հետազոտությունը չի ներառում թուրքական մամուլը, քանզի դա լինելով նաև որոշակիորեն ուսումնասիրված դուրս է հոդվածի հետազոտական խնդիրներից: Ուստի մեր առջև խնդիր ենք դրել ա) օսմանյան քարոզչական երկու հրատարակությունների օրինակով ներկայացնել թուրքական պաշտոնական տեսակետը նշված իրադարձությունների վերաբերյալ՝ զուգահեռ վերհանելով առավել կարևոր անցքերը, բ) առանձնացնել իրադարձությունների գնահատման և ներկայացման տվյալ ժամանակի օսմանյան սկզբունքներն ու մեթոդները:

ա. 1877– 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը. քարոզչություն և հակաքարոզչություն

Հայկական հարցը միջազգային դիվանագիտության ասպարեզ մտավ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և դրա հետևանքով կնքված նախ Սան Ստեֆանոյի, ապա նաև Բեռլինի պայմանագրերով: Ռուս-թուրքական պատերազմի և դրան նախորդած Կոստանդնուպոլսի կոնֆերանսի (1876 թ. դեկտեմբեր-1877 թ. հունվար) ժամանակահատվածում նկատվում է թուրքական քարոզչության ակտիվացում: Այս ամենը տեղի էր ունենում 1875-1878 թթ. մերձավորարևելյան ճգնաժամի պայմաններում, երբ օսմանյան իշխանության դեմ ապստամբել էին Բուլղարիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի ժողովուրդները: Թուրքական իշխանությունների դաժան հակա-

հարվածի հետևանքով 1876 թ. Բուլղարիայում տարբեր հաշվումներով կոտորվել էր 10-20 հազար մարդ, ավերվել էին տասնյակ գյուղեր¹: 1876 թ. դեկտեմբերի 23-ին թուրքական իշխանությունները շտապեցին հայտարարել օսմանյան առաջին սահմանադրության հռչակման մասին, որի նպատակը ճգնաժամի հաղթահարման համար Կոստանդնուպոլսում հրավիրված համաժողովում մեծ տերությունների առաջարկների քննարկման և իրագործման կանխումն էր: Սակայն 1877 թ. հունվարի 20-ին Կոստանդնուպոլսի համաժողովը փակվեց:

Այդ նույն ժամանակահատվածում Բուլղարիայում թուրքական վայրագությունների հետևանքով ողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը Բալկանների վրա էր: Հենց Բուլղարիայում իրականացված կոտորածներն էին, որ Եվրոպայում խիստ բացասական հանրային դիրքորոշում էին ստեղծել Օսմանյան կայսրության նկատմամբ²: Օսմանյան կայսրությունը փաստորեն դեմ հանդիման էր դուրս եկել ոչ միայն ռուսական բանակին, այլ նաև եվրոպական հանրային կարծիքին: Այս շրջանում է, որ օսմանյան պետական քարոզչությունը սկսեց օգտագործել այն հնարքները, որոնք հետագայում կատարելագործվեցին Առաջին աշխարհամարտի ժամանակ: Այս առումով հետազոտական առաջնային խնդիր է դառնում օսմանյան պետական քարոզչության առանձնահատկությունների ուսումնասիրումը: Այդ հարցի պատասխանը գտնելուն կօգնի քարոզչության բովանդակային կողմին ծանոթանալը:

Մինչ այդ պետք է նշել, որ հակառուսական տրամադրությունները շատ ուժեղ էին նոր օսմանների քաղաքական շրջանակներում, քանզի Ռուսաստանը դիտարկվում

¹ Այդ մասին տե՛ս Yale W., *The Near East: A Modern History*, Ann Arbor: The University of Michigan Press, 1958, էջ 85, Walker Chr., *Armenia: The Survival of a Nation*, New York: St. Martin's Press, 1980, էջ 107, Tashjian J., *Turkey: Author of Genocide: The Centenary Record of Turkey 1822-1922*, Boston, MA: Commemorative Committee on the 50th Anniversary of the Turkish Massacres of the Armenians, 1965, էջ 8:

² Եվրոպական արձագանքը նշանավորվեց բազմաթիվ պամֆլետների, գրքույկների, մամուլի հրապարակումներով: Այս առումով բնութագրական է բրիտանական արձագանքը՝ հաշվի առնելով այն փաստը, որ այդ շրջանում Օսմանյան կայսրությունը վայելում էր Մեծ Բրիտանիայի աջակցությունը: Բուլղարիայում թուրքական վայրագությունների քննադատությանն էին ուղղված Ուիլյամ Գլադստոնի գրած պամֆլետները, որոնցում նա հստակ մեղադրում և քննադատում էր Օսմանյան կայսրությանը և նրա իշխանություններին (տե՛ս Gladstone W.E., *Bulgarian Horrors and the Question of the East*, London: John Murray, 1876; նույնի՝ *Lessons in Massacre: or, The Conduct of the Turkish Government in and about Bulgaria since May 1876*, London: John Murray, 1877): Թուրքական վայրագություններն արձանագրած հրատարակությունների շարքում կարելի է դասել նաև հետևյալը՝ Brockett L. P., *The Cross and the Crescent; or, Russia, Turkey, and the Countries Adjacent, in 1876-7: A Graphic Description of the Countries, Peoples, Races and Religions of the Regions Now Involved in War*, Philadelphia: Hubbard Bros., 1877; Gallenga Antonio Carlo Napoleone, *Two Years of the Eastern Question*, London: S. Tinsley, 1877:

Այն, որ Բուլղարիայում տեղի ունեցած սարսափները մեծ դեր խաղացին Արևմուտքում ոչ միայն Օսմանյան կայսրության, այլ նաև հենց թուրքի կերպարի բացասական ընկալման ամրապնդման առումով, հաստատում են հետևյալ հրատարակությունները՝ Barnwell R. Grant, *The Russo-Turkish War: Comprising an Account of the Servian Insurrection, the Dreadful Massacre of Christians in Bulgaria and Other Turkish Atrocities*, Philadelphia: Keystone Publishing co., 1877; Creasy Edward Shepherd, *History of the Ottoman Turks*, New York: H. Holt and Co., 1877:

էր որպէս վտանգի գլխավոր աղբյուր Օսմանյան կայսրության տարածքների հնարավոր կորստի տեսանկյունից: Ռուսաստանի դեմ քարոզչության ծավալման գործում կարևոր տեղ էր գրավում թուրքական մամուլը. 1876 թ. օսմանյան «Բասիրեթ», «Վակքթ», «Սաբախ» և այլ թերթեր հազեցած էին հակառուսական տրամադրություններով³: Այնուամենայնիվ թուրքական մամուլը չունէր այնպիսի ազդեցիկ դեր, որ կարողանար ազդել եվրոպական հանրային կարծիքի վրա, և այդ միջոցառումներն ավելի շատ ներքին սպառնալու էին ուղղված: Ուստի պատահական չէր, որ օսմանյան քարոզչության մեջ սկսվեց օգտագործվել նոր գործիք՝ եվրոպական լեզուներով գրքույկների հրատարակման տեսքով, Արևմուտքում հասարակական կարծիքի վրա ազդեցություն տարածելու նպատակով: Իսկ թե բովանդակային առումով ինչ էր ամփոփված դրանցում, կքննարկենք ստորև:

բ. Օսմանյան քարոզչությունը երկու պետական հրատարակություններում

Ռուս-թուրքական պատերազմի մասին առկա է մեծ քանակությամբ գրականություն⁴: Այդ շարքում առկա է նաև օսմանյան կառավարության կողմից կազմված երկու հրատարակություն, որոնք ներկայացնում են քննարկվող իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական տեսակետ⁵: Դրանցից առաջինը լույս է տեսել ֆրանսերենով Կոստանդնուպոլսի համաժողովի հրավիրման ժամանակահատվածում՝ 1877 թ. հունվարին և վերնագրված է «Ռուսների վայրագությունները. փաստաթղթեր՝ ներկայացված Կոստանդնուպոլսի համաժողովին»⁶ (այսուհետ՝ «Ռուսների վայրագություններ»): 17-էջանոց այս ժողովածուն բաղկացած է 4 փաստաթղթից՝

1. «Դրիմի մուսուլմանների խնդրագիր՝ ուղղված Կոստանդնուպոլսի կոնֆերանսի անդամներին»:
2. «Կազանի շրջանի մուսուլմանների գանգատը, որոնք հետապնդվել և նահատակվել են քրիստոնեություն ընդունելու պարտադրանքի հետևանքով»:
3. «Ռուսական լծի տակ գտնվող Կովկասի չերքեզ մուսուլմանների դրությանը նվիրված զեկույց, նրանց դեմ ուղղված և իրագործված հալածանքների և դաժա-

³ Դեռևս 1867—1870 թթ. Լոնդոնում լույս տեսնող «Մուիբիր» և «Հուրիեթ» թերթերում օսմանիզմի քարոզչությունը համեմված էր սահմանադրականների հակառուսական տրամադրություններով: Բացի դրանից, հակառուսական տրամադրություններով էր հազեցած նաև «Թասֆիր-ի Էվբիար»-ը 1865—1867 թթ.՝ Նամըք Քեմալի խմբագրապետության ժամանակահատվածում (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Петросян Ю. А., Русско-турецкие отношения и первые турецкие конституционалисты (1875—1877 гг.), *Պարմու-քանաիրական հանդես*, 1984, № 4, էջ 45—58):

⁴ Ժամանակակիցների գործերի վերաբերյալ միայն գաղափար կազմելու համար բավական է տեսնել «Բրիլլ» հրատարակչության կազմած հետևյալ մատենագիտությունը՝ *Russian-Ottoman Relations, 1600-1800: Sources in Western Languages, Part 4: The End of the Empires, 1857-1914*, Leiden: Brill, 2006:

⁵ Անշուշտ առկա են թուրքամետ այլ հրատարակություններ ևս, սակայն պատկանում են առանձին հեղինակների գրչին, օրինակ՝ L. Bernhard, *Les Atrocités Russes en Bulgarie et en Arménie pendant la guerre de 1877*, Berlin: Albert Adelsdorff, 1878:

⁶ *Atrocités Russes: Documents soumis a la Conférence de Constantinople*, Constantinople, 1877.

նության ռեժիմի մասին բողոք՝ ուղղված Կոստանդնուպոլսի կոնֆերանսի մասնակիցներին»:

4. «Դադստանի կամ Արևելյան Կովկասի մուսուլման բնակչության բողոքը՝ ուղղված Կոստանդնուպոլսի կոնֆերանսի անդամներին, բնակչություն, որ հետապնդվել է, աքսորվել է Սիրիի կամ կոտորվել է»⁷:

Փաստաթղթերի անվանումներից պարզ է, որ դրանք ներկայացնում են Ռուսական կայսրության՝ առավել շատ մուսուլման բնակչություն ունեցող շրջանները՝ Դրիմ, Կազան (Թաթարստան), Կովկաս (չերքեզներ և Դադստան): Վերոհիշյալ փաստաթղթերի (հատկապես երրորդ) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա վկայությունների մի զգալի հատված ներկայացնում են դեպքեր, որոնք տեղի են ունեցել հիմնականում 1850-ական թթ. վերջին և 1860-ական թթ. սկզբին: Անշուշտ հարց է ծագում, թե ինչու դեպքերից միայն մեկ-երկու տասնամյակ անց որոշվեց դրանք հավաքել և ներկայացնել միջազգային հանրությանը: Երկրորդ կարևոր իրողությունը հյուսիսկովկասյան մուսուլմանների՝ Օսմանյան կայսրությունում վերաբնակեցման թեմայի թարմացումն է: Եվ երրորդ առանձնահատուկ գիծն այն է, որ փաստաթղթերում առկա նյութի մեծ մասը նվիրված է հիշյալ տարածքներում ռուսական վարչակարգի և «քրիստոնյաների կողմից մուսուլմանների հետապնդման» օրինակների ներկայացմանը:

Ըստ այդմ՝ «*Ռուսների փայրագություններ*»-ը փաստարկման առումով թույլ է հետևյալ հիմնական պատճառներով՝

1. Նկարագրվող դեպքերի զգալի մասն այն է, ինչը տեղի է ունեցել դեպքերից առնվազն 10-20 տարի առաջ և անմիջական առնչություն չունի ռուս-թուրքական պատերազմի և Մերձավորարևելյան ճգնաժամի հետ:
2. Ներկայացվող դեպքերը, բացառությամբ հյուսիսկովկասցիների տեղահանության, չեն փաստվում պատմական այլ՝ օտար, անկողմնակալ աղբյուրներով, իսկ դրանց հավաստիությունը փաստող միակ ապացույցը յուրաքանչյուր փաստաթղթի տակ առկա տեղական մուսուլմանների ներկայացուցիչների անուններն են:
3. Թույլ է անգամ քարոզչական տեսանկյունից, որովհետև 4 փաստաթուղթ ներկայացնող այս հրատարակությունը իր փաստարկներով չէր կարող մրցել անգամ բրիտանական մամուլում լույս տեսած մեկ հոդվածի հետ:

Քարոզչական այս ժողովածուն, անշուշտ, կազմվել է նաև Արևմուտքում լույս տեսնող բազմաթիվ քննադատական հրատարակություններին հակակշիռ ստեղծելու անհրաժեշտությունից ելնելով: Այսինքն՝ օսմանյան վարչակարգը փորձել է դուրս գալ «կոտորածներ իրականացնողի» կերպարից՝ դրանում փորձելով մեղադրել գլխավոր ախոյանին՝ Ռուսական կայսրությանը:

⁷ Փաստաթղթերի անվանումները տրվում են համաձայն բնագրի:

Մյուս հակառուսական հրատարակությունը նույն տարում՝ 1877 թ., լույս տեսած «Ռուսական վայրագությունները Ասիայում և Եվրոպայում 1877 թ. հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին» ժողովածուն է (այսուհետ՝ «Ռուսական վայրագություններ»)՝⁸։ Այն կազմված է 217 փաստաթղթից՝ հիմնականում պաշտոնական և մասնավոր հեռագրեր ու նամակներ։ Նախորդի հետ համեմատած՝ այս ժողովածուն շատ ավելի ընդգրկուն է, իսկ բովանդակային առումով և հարցադրումներով ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում, ուստի ենթադրում է ավելի մանրամասն անդրադարձ։ Օսմանյան կառավարության կողմից ներկայացվող փաստաթղթերի գերակշիռ մեծամասնությունը, մասնավորապես 217 փաստաթղթից 196-ը վերաբերում են պատերազմական գործողությունների Բալկանյան ճակատին և այնտեղ տեղի ունեցող իրադարձություններին։ Մեր հետազոտության շրջանակը, սակայն, սահմանափակվելու է միայն Կովկասյան ճակատին առնչվող փաստաթղթերի քննությամբ։

գ. «Ռուսական վայրագություններ»-ի՝ Կովկասյան ճակատին վերաբերող փաստաթղթերը

«Ռուսական վայրագություններ»-ում ամփոփված նյութն առավել ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ ենք համարում խմբավորել դրանում տեղ գտած փաստաթղթերը։ Ժողովածուում առկա է Կովկասյան ճակատին առնչվող 21 փաստաթուղթ, որոնք կարելի է բաժանել երեք խմբի՝ ըստ փաստաթղթերի հեղինակների։ Առաջին խումբ փաստաթղթերը՝ թվով 3 հատ, ներկայացնում են «քաղվածքներ»՝ տարբեր նամակներից և փաստաթղթերից, որոնցում չեն նշվում հեռագրի հեղինակ(ներ)-ը, անգամ ուղարկման հասցեները (ինչպես օրինակ՝ N4), կամ նույնիսկ այնպիսի հեռագրեր, որոնք հասցեագրված են հետևյալ կերպ. «Հեռագիր մեկ պաշտոնական անձից մյուս պաշտոնական անձին» (անգլ.՝ Telegram from an official person to another official person, փաստաթղթեր N84 և N88)⁹։

Փաստաթղթերի մյուս խումբը (թվով 10 հատ, N 1, 2, 5, 6, 7, 11, 18, 21, 42, 62) ներքին գործերի և ռազմական նախարարություններին, ինչպես նաև Բարձր դռանն ուղղված հեռագրերն են կամ քաղվածքներ դրանցից, որոնց համար որպես հեղինակներ նշվում են ռազմական գործողությունների Կովկասյան ճակատի թուրք հրամանատարները, կամ էլ պարզապես «անանուն քաղվածքներ» են։ Մասնավորապես առկա են Էրզրումի կառավարիչ Իսմայիլ փաշայի, Կովկասյան ճակատի հրամանատար Ահմեդ Մուխտար փաշայի և այլ ռազմական ու քաղաքացիական պաշտոնյաների կողմից ուղարկված հեռագրեր։

Երրորդ խումբ փաստաթղթերը (թվով 8 հատ, N 76, 89, 91, 93, 94, 96, 99, 140), տարբեր անձանց կողմից եվրոպական մամուլին («Daily Telegraph», «The Observer»,

⁸ *Russian Atrocities in Asia and Europe during the Months of June, July, and August 1877*, Constantinople, A. H. Boyajian Press, 1877: Մենք օգտվել ենք ժողովածուի՝ ԱՄՆ-ի Լուիսվիլի համալսարանի վերկայքում տեղադրված էլեկտրոնային տարբերակից (տե՛ս <http://louisville.edu/a-s/history/turks/Russian%20Atrocities.pdf> (ղիսվել է՝ 05/04/2014))։

⁹ Տե՛ս *Russian Atrocities in Asia and Europe...*, էջ 58 և 60։

«Telegraph», «Reuter's Agency», «Morning Post») ուղղված հեռագրեր են (քաղաքային թղթի 96-րդ փաստաթղթի, որը վերնագրված է *Telegram from Mr. Schluga to Mr. Etienne, Vienna. Erzeroum, July 9th, 1877*): Այս խումբ փաստաթղթերի առկայությունը պետք է առավել արժանահավատություն հաղորդեր ժողովածուին, քանի որ որպես դրանց հեղինակներ նշված են եվրոպացիների անուններ¹⁰: Սակայն տարակուսանք է առաջանում այն բանից, որ դրանք ոչ թե եվրոպական մամուլից բերված քաղվածքներ են, ինչպես սովորաբար արվում է որևէ ժողովածու կազմելիս, այլ նշվում է, որ այս կամ այն անձը հիշյալ հեռագիրն ուղարկել է այս կամ այն թերթի խմբագրություն: Անպատասխան է մնում մի կարևոր հարց. այդ դեպքում ինչու չեն մեջբերել եվրոպական մամուլում տպագրված հոդվածներ, որոնք գոնե արժանահավատություն կհաղորդեին այդ փաստաթղթերի իսկությունը:

Փաստաթղթերի վերջին խմբի եվրոպացի հեղինակների հակառուսական տրամադրություններն անշուշտ կարելի է հասկանալ, սակայն որոշ կասկածներ են առաջանում դրանցում ռուսների կողմից մուսուլմանների կոտորածների մասին «տեղեկությունների» հետ կապված: Այս առումով բնութագրական է ավստրիացի սպա, ճարտարագետ Ռուդոլֆ ֆոն Շլուգային վերագրվող վերևում արդեն հիշատակված հեռագիրը (N96), որտեղ նա ներկայացնում է 1877 թ. հունիսի վերջին ռուսների կողմից մի քանի գյուղերի ոչնչացման և ավելի քան հիսուն բնակիչների կոտորածի մասին¹¹: Սակայն ուշագրավ է, որ նույն անձը հետագայում «La Revue Militaire Autrichienne De Streffleur»-ում տպագրել է մի աշխատանք, որը նվիրված է 1877 թ. Հայաստանում ծավալված ռազմական գործողություններին, և 67 էջ ծավալ ունեցող այդ աշխատանքի մեջ չենք հանդիպում Հայաստանի տարածքում ռուսների կողմից մուսուլմանների կոտորածի գեթ մեկ դեպքի նկարագրության: Մինչդեռ նա, լինելով դեպքերի ժամանակակիցն ու ականատեսը, ամենայն մանրամասնությամբ նկարագրել է իրադարձությունները¹²:

դ. Թուրքական պատումը երկու դրվագով. փաստարկներ և հակափաստարկներ

1. Բայազետի կոտորածն ու Ալաշկերտի հովտի ողբերգական իրադարձությունները

Ժողովածուի հրատարակման գլխավոր նպատակներից մեկը «ռուսների կողմից մուսուլմանների կոտորածների» ներկայացումն է: Դիցուք, դիտարկենք նշված շրջաններին վերաբերող հետևյալ փաստաթուղթը:

Փաստաթուղթ N5 - «... Այս գործիքի [Ալաշկերտի կողմում կոլոդ ռուսական զորահստվը - Գ. Վ.] հրամանատարը մասնակցել է իր ճանապարհին ընկած ամեն ինչի թալանին: Նա այրել է քրիստոնյաների և մուսուլմանների բոլոր տները՝ տանելով դրանց բնակիչների բոլոր բարիքները: Այդ նողկալի բռնություններից բացի սպանել

¹⁰ Նշված անուններով մարդիկ իսկապես եղել են պատերազմական թղթակիցներ և նշված ժամանակահատվածում գտնվել են Թուրքիայում:

¹¹ Տե՛ս *Russian Atrocities in Asia and Europe...*, էջ 63:

¹² Տե՛ս Rudolf Von Schluga, «Les Combats De Halijas Et De Zewin En Arménie En 1877, *La Revue Militaire Autrichienne De Streffleur*, Traduit Par J. Bornecque, 1880:

է նաև երեք կնոջ: Օրսարերկրյա թղթակիցների հաղորդումները կարդալով՝ տերությունները կարող են համոզվել այս զեկույցների ճշմարտացիության մեջ»¹³:

Այս փաստաթուղթը՝ թվագրված 1877 թ. հունիսի 19 (հուլիսի 1), ուղղված է ներքին գործերի նախարարությանը և ուղարկված է Վանի ու Բայազետի շրջանում գործող թուրքական զորախմբի հրամանատարությունից: Ընդհանրապես Բայազետի հատվածը և Ալաշկերտի ամբողջ հովիտը քննարկվող թեմայի առումով ամենակարևոր շրջաններն են: Եթե խոսքը 1877 թ. ամռանը պատերազմական գործողությունների Կովկասյան ճակատում տեղի ունեցած քաղաքացիական անձանց սպանությունների կամ զանգվածային կոտորածի մասին է, նախ և առաջ պետք է հիշել Բայազետի դեպքերը, որը ամենախոշոր զանգվածային կոտորածն էր, ինչպես նաև Ալաշկերտի գյուղերում կատարվածը: Իսկ որ ամենակարևորն է, այդ կոտորածների գոհերը ոչ թե մուսուլմաններն էին, այլ տեղի հայ բնակչությունը, իսկ իրականացնողներն ամենևին էլ ռուսները չէին:

Բայազետը ռուսական բանակի երևանյան խմբավորման կողմից առանց դժվարության գրավվեց 1877 թ. ապրիլի 30(18)-ին: Քաղաքը պահպանելու համար թողնելով 2.000-ի չափ զինվոր՝ ռուսական բանակը շարունակեց առաջխաղացումը¹⁴: Հունիսի 6-ին թուրքական զորքը պաշարեց քաղաքը, և սկսվեց Բայազետի 23-օրյա ինքնապաշտպանությունը¹⁵: Հենց այս շրջանում էլ տեղի ունեցան ողբերգական իրադարձություններ: Ինչպես հաղորդում է Բայազետի ինքնապաշտպանության ղեկավար Ֆեոդոր Շտոկվիչը. «Գիշերը (հունիսի 6-ի -Գ. Վ.) սաշեցուցիչ տեսարան էր, որին սկանալուստ լինելով՝ զինվորներն արտասակեցին. կոտորում էին տղամարդկանց, կանանց ու երեխաներին և դեռևս ողջ նրանց նետում էին կրակի մեջ, ամբողջ քաղաքը կրակի մեջ էր, ամենուր լսվում էին գոռոցներ, հեկեկոցներ և տնքոց»¹⁶: Քրդական ջոկատների և նրանց միացած թուրքական կանոնավոր զորքի այս վայրագությունները կազմակերպվել և ուղղորդվել են հենց քաղաքը գրոհող Ֆայիկ փաշայի կողմից¹⁷:

¹³ *Russian Atrocities in Asia and Europe...*, էջ 8:

¹⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս Մօմճեան Ա., *Պատմություն Արեւելեան պատերազմին. Զարդարենայ այլեայլ պարկերօք եւ կենդանագրօք, Հարոր Ա, Կոստանդնուպօլիս: Տպագրութիւն Արամեան, 1879*, էջ 164-165:

¹⁵ Ֆեոդոր Շտոկվիչի գլխավորությամբ Բայազետի ինքնապաշտպանության մասին մանրամասն տե՛ս Антонов В. М., *23-х дневная оборона Баязетской цитадели и комендант Федор Эдуардович Штоквич*, Санкт Петербург: «Общественная польза», 1878 (репринт Москва: Книга по Требованию, 2011):

¹⁶ Антонов В. М., *աշխ.*, էջ 10:

¹⁷ Այդ մասին է վկայում նաև դեպքերից մեկ-երկու տարի հետո հրատարակված Ա. Մօմճեանի աշխատությունը, որից մեջբերում ենք հետևյալ հատվածը. «Վանայ զինուորական կառավարիչ կամ հրամանատար Ֆայիզ փաշա այս քաղաքին՝ ինչպես նաև Բաղիշոյ եւ Մշոյ մէջ եղած կանոնաւոր զօրքն խմբելով՝ կարող եղաւ եօթն վաշտ կազմելու: Սոյն փոքր խմբին աջակից տալու համար Ֆայիզ փաշա Հայրերանյը Քիւրդերուն Շէյխին՝ Ճէլալէրդինին դիմեց եւ աղաչեց որ կամատրներ ղրկէ առ ինքն: Ասոր վրայ 20.000ի չափ կամատրք եկան. Լերանց մէջ ազդարարութիւն եղած էր թէ հաւաքոյ պատերազմն պիտի լինէր ընդհուպ եւ բոլոր քրիստոնեայնները պիտի ջարդուէին: Ճոխ աւար մը յափշտակելու առիթ նշմարելով՝ անգեղաց երամներու պէս հասան

Ռուսական և հայկական աղբյուրներից զատ այս ողբերգության փաստը հաստատվում է նաև օտար՝ եվրոպական աղբյուրներով: Այստեղ հեռու գնալու անհրաժեշտություն չկա: Հակառակ քննարկվող ժողովածուի, մենք կարող ենք օգտվել ոչ թե եվրոպական մամուլին ուղղված անհայտ նամակներից, այլ հենց եվրոպական թերթերի թղթակիցների հաղորդած տեղեկություններից: Բարեբախտաբար, պահպանվել են այն ժամանակ բրիտանական «Times» լրագրի թղթակից Չարլզ Նորմանի հաղորդած տեղեկությունները, որոնք զետեղված են նրա հեղինակած «Հայաստան և 1877 թվականի կամպանիան (արշավը)» աշխատության մեջ¹⁸: Այս աղբյուրի կարևորությունն այն է, որ դրանում օտարերկրացի ականատեսի կողմից քննարկվում և ներկայացվում է այն վայրերում տեղի ունեցած իրադարձությունների իրական պատումը, որոնք այդպես ջանասիրաբար նենգափոխվում են թուրքական ժողովածուում: Կապիտան Չարլզ Նորմանն ուղեկցել է սրբ Առնոլդ Քեմբելին (1820-1908), ով նշանակված էր թուրքական բանակում՝ որպես բրիտանական ռազմական կոմիսար¹⁹: Նրանք ականատես են եղել կարևորագույն ռազմական գործողությունների²⁰, հետապնդվել են կոզակների կողմից և հազիվ փրկվել մահից²¹: Ռուսների նկատմամբ նրանց դիրքորոշումը, հասկանալի է, որ չէր կարող լինել դրական: Այս իրողությունն ուժեղացնում է նրանց հաղորդած տեղեկությունների հավաստիությունը, համենայն դեպս նրանց երբեք չեն մեղադրի ռուսասիրության մեջ²²:

բոլոր հուժկու մարդիկ, որոնց համար գուրանն յաղթանակներ էր կամ ոչ՝ թնալ փոյթ չէր» (տե՛ս Մօսճեան Ա., նշվ. աշխ., էջ 347):

Բայազետում կատարված ռճրագործությունների մասին նյութ կա նաև ռուսական «Русская старина» ամսագրի էջերում, որտեղ իրադարձությունները նկարագրվում են գնդապետ Կոնստանտին Գեյսսի և երևանյան խմբավորման քաղաքացիական մասի ղեկավար Ա. Խանազովի կողմից (տե՛ս «Русская старина», 1878, Т. 22, Вып. 7, էջ 455-460, «Русская старина», 1885, Т. 45, Вып. 1, էջ 157-186, «Русская старина», 1885, Т. 45, Вып. 2, էջ 443-468):

¹⁸ Տե՛ս Norman Ch. B., *Armenia and the Campaign of 1877*, London: Cassell, Petter, and Galpin, 1878:

¹⁹ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Barry Quintin, *War in the East: A Military History of the Russo-Turkish War 1877-78*, Solihull: Helion & Company Ltd, 2012, էջ 182-184:

²⁰ Նորմանը նշում է, որ թուրքերի վայրագությունների մասին զգալի տեղեկություններ է հաղորդել նաև այդ ժամանակ Էրզրումում Մեծ Բրիտանիայի հյուպատոս պրն Զոհրաբը, որոնք ամփոփված են Ֆորին Օֆիսի՝ Թուրքիային նվիրված զեկույցների շարքում (տե՛ս Norman C. B., *Armenia and the Campaign of 1877*, էջ 293):

²¹ Այդ մասին տե՛ս “The Ottoman War and Telegraph offices,” *Timaru Herald*, September 26, 1877, էջ 4:

²² Չարլզ Նորմանին անշուշտ կարելի է դիտարկել արժանահավատ աղբյուր, քանի որ նա բրիտանական թերթի թղթակից էր: Ավելին, եթե անգամ կասկածի տակ էլ դրվի այս աղբյուրի արժանահավատությունը, ապա դա պետք է լինի հոգուտ թուրքական կողմի (նաև հաշվի առնելով նշված շրջանում Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը Ռուսաստանի քաղաքականության նկատմամբ), քանզի ինչպես ինքը՝ հեղինակն է նշում գրքի առաջաբանում. «*Ես ափ իջա Տրապիզոն որպես ընդգծված թուրքասեր և խորապես համոզված այն բանում, որ թուրքական անկարգությունը և վար կառավարումը խիստ չափազանցված է: Լինելով նորաթուխ լրագրության մասնագիտության մեջ, ես պարտավորված չէի հավարարիմ մնալ իմ նախկին դիրքորոշման մեջ իմ հեղափոխող փառանքներում փրամաքանությունը պահելու համար, և լինելով ամբողջովին ազապ հրահանգ-*

Այսպես, Չ. Նորմանի հաղորդած տեղեկություններից պարզ է դառնում, որ Բայազետում սպանվում է 1100 մարդ²³։ Ալաշկերտի հովտի 122 գյուղերից միայն 9-ն են խուսափել ամայացումից և կոտորածներից։ Մուշի շրջանում մի շարք գյուղեր ավերվել են, բնակիչները՝ սպանվել։ Այդ ամենը կատարվում էր ոչ միայն թուրքական բանակի, այլ նաև նրանց դրոմամբ ու նրանց հովանավորությամբ գործող ավագակախմբերի²⁴ կողմից՝ շեյխ Ջալալեդդինի, Օբայդուլահի, Ֆաքիմ էֆենդիի և ուրիշների ղեկավարությամբ²⁵։

ներում, ես որոշեցի արդարացիորեն և ազնվորեն գրել այն ամենը, ինչ տեսնում եմ և ջանք չիւնայել Օսմանյան կողմը պաշտպանելու համար...

«Թայմս»-ին թղթակցելիս ես կանոն արքեպիսկոպոսի ռեկտ, բացի նրանից, ինչի ակադեմիան եմ եղել ես կամ փաստեր՝ հաստատված եվրոպացի ակադեմիաների կողմից։ Իմ նամակների վերահրապարակման ժամանակ ես պահպանել եմ այդ սկզբունքը։ Ես աշխատել եմ գրել անկողմնակալ առանց թուրքերի թերություններն աղավաղելու և վայրագությունները ռուսներին վերագրելու։ Անկեղծորեն ասում եմ, ես չկարողացա գրել գեթ մեկ ապացույցի դաժանության դեպք՝ իրագործված Մեծ իշխանի բանակի կողմից, և իմ այս հայտարարությունները հաստատվում են սրբ Առնոլդ Բենքիի դիվանագիտական զեկուցագրերով՝ վերջերս հրատարակված Արևելյան հարցին վերաբերող Կապույտ Գրքում։ Թուրքական վարչակարգի քաղաքականության հետևանքով ոչ ոք չի կարողանում ճիշտ բարձրաձայնել. ոչինչ չէր արվում հիվանդներին և վիրավորներին օգնելու համար, աշխատողները շահագործվում էին, իսկ մեղավորների անպարժեխությունը վրդովմունք էր առաջացնում ազնիվ մարդկանց շրջանում, ինչպես նաև ստահող լուրեր էին շրջանառվում Ռուսաստանի դաժանության մասին. մասնավորապես Արդահանի բանարարկյաների և Ալաշկերտի հովիտի բնակչության հետ վարվելու վերաբերյալ։ Այսպիսի գործողությունները վանում էին այն մարդկանց, ովքեր սատարում էին իրենց արդարության համար ամբարտապան վարչակարգի դեմ պայքարողներին» (Norman C. B., *Armenia and the Campaign of 1877*, London: Cassell, Petter, and Galpin, 1878, p. VII):

²³ Տե՛ս Norman C. B., *Armenia and the Campaign of 1877*, էջ 296, 299-300:

²⁴ Նույն տեղում, էջ 296:

²⁵ Ընդհանրապես այս շրջանում քրդական ջոկատների ակտիվության մասին զգալի գրականություն կա, որոնցում տարբեր տեսանկյուններից են դիտարկվում քուրդ առաջնորդների գործողությունների ընթացքը և շարժառիթները (տե՛ս Mehmet Firat Kilic, «Between Empires: the Movement of Sheikh Ubeydullah», *International Journal of Kurdish Studies*, 2006, Volume 20, Issue 1/2, էջ 57-121, Mehmet Firat Kilic, *Sheikh Ubeydullah's role in 1878-1878 Ottoman Russian War*, <http://www.penkurd.org/engilizi/ali-kilic/Sheikh-Ubeydullahs-Orole-in-1878-1878-Ottoman-Russian-War.pdf> (դիտվել է՝ 05/04/2016)):

Մի բան անվիճելի է. քրդերն այս պատերազմում դաշնակցել և աջակցել են օսմանյան բանակին ընդդեմ ռուսների։ Սակայն չափազանց կարևոր է ընդգծել այն փաստը, որ ինչպես Բայազետի կոտորածը, այնպես էլ Ալաշկերտի, Մուշի և այլ շրջանների հայ բնակչության դեմ կատարված բռնությունները պարզապես հայ-քրդական ներքին հակասությունների հետևանք չեն։ Այստեղ գլխավոր շարժիչ և դրդիչ ուժը համիդյան վարչակարգն է։ Այս առումով բնութագրական է հայ դաշնակցական հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան Կ. Մասունու հետևյալ դիտարկումը. «Քիւրդերը Սուլթան Համիդի գահակալութեամբ ավելի քաջալերութիւն գրան։ Միւս կողմէ, քիւրդերու եւ հայերու միջեւ իւրամարդ բացուեցաւ։ Այն համոզումը կար, թէ եթէ քրիստոնէայ Ռուսաստանը փրկէր հայկական գաւառներուն՝ քրիստոնէայ հայութիւնն էր, որ առաջնութիւն պիտի ստանար։ Այս պայմաններուն մէջ քրտութիւնն իր դէմքը կը դարձնէր Թուրքիոյ կողմը։ Իսկ հայութիւնը՝ թողելով վերջնականօրէն թրքական օրիանթացիան՝ կը հակէր Ռուսաստանի կողմը» (տե՛ս Մասունի Կ., *Քիւրդ ազգային շարժումները եւ հայ-քրդական յարաբերութիւնները* (ԺԵ դարէն մինչեւ մեր օրերը), Պէյրութ։ Համազգային տպ., 1969, էջ 137-138):

Բայազետի ողբերգությունը, չնայած աղավաղված և թուրքամետ դիտարկումներով, այնուամենայնիվ հաստատվում է նաև բրիտանացի լրագրող և պատերազմական թղթակից Չարլզ Ուիլյամսի²⁶ հաղորդած տեղեկություններով: Նա 1878 թ. իր ուղարկած նամակներից և հավաքած տեղեկություններից կազմում և հրատարակում է մի գիրք («Հայկական արշավը: 1877 թ. արշավի օրագրությունը, Հայաստանում և Քուրդիստանում»)²⁷: Սակայն այս հեղինակի ընդգծված թուրքասիրությունը, ի տարբերություն Չ. Նորմանի, հնարավորություն չտվեց լինելու նույնքան օբյեկտիվ: Մասնավորապես Բայազետում կատարվածի մասին նա տալիս է աղճատված տեղեկություններ, իսկ կոտորածների զոհ համարում է ռուսական զորքին, այսինքն՝ ամենևին չի ընդունում քրդերի և նրանց հովանավորող թուրքական իշխանությունների կողմից տեղի հայ բնակչության կոտորածի փաստը²⁸:

Այսպիսով, ակնհայտ է, որ Բայազետի իրական, ոչ մտացածին ողբերգությունը, որի եղելությունը հաստատվում է օտար, անկողմնակալ աղբյուրներով, պարզապես մոռացության է մատնվում և անգամ չի քննարկվում: Իսկ Ալաշկերտի հովտի գյուղերում կատարված ողբերգությունը ներկայացվում է ծուռ հայելու միջոցով:

2. Ուլքիլիսեի միջադեպը

«Ռուսական վայրագություններ»-ում ամփոփված տեղեկությունների «իսկության» մասին կարելի է գաղափար կազմել նաև որոշակի՝ տեղական նշանակություն ունեցող որևէ իրադարձության դիտարկմամբ: Տվյալ դեպքում մենք քննության կառնենք թուրքական ժողովածուում ներկայացվող մի միջադեպ: Այստեղ պետք է նշել, որ ժողովածուի Կովկասյան ճակատին առնչվող փաստաթղթերում ընդհանուր առմամբ հանդիպում ենք «քրիստոնյա» ձևակերպմանը: Դիցուք դիտարկենք երեք փաստաթուղթ, որտեղ օգտագործվում է «հայ» (անգլ. Armenian) բառը:

Փաստաթուղթ N7՝ «Այս պահին գիտեմ, որ ռուսները բռնությամբ գերեվարել են Ուլքիլիսեի հայ եպիսկոպոսին նրան վիրավորելուց և կապկպելուց հետո: Այդ հոգևորականը նվիրված էր պետության շահերին»²⁹:

Փաստաթուղթ N93՝ «Ուլքիլիսեում երեք ժամ ցրտով մարտից հետո ռուսները թալանեցին եկեղեցին, այրեցին տները, բռնության ենթարկեցին և առևանգեցին հայ եպիսկոպոսին»³⁰:

²⁶ Չարլզ Ֆրեդերիկ Ուիլյամսը (1838-1904 թթ.) թղթակցել է բրիտանական «Evening Standard» և «The Evening News» պարբերականներին: Նա բրիտանացի առաջին թղթակիցներից մեկն էր, որ 1877 թ. ժամանեց Կոստանդնուպոլիս՝ պատերազմի ընթացքում ուղեկցելով թուրքական չորրորդ բանակի հրամանատար Մուխտար փաշային (այդ մասին տե՛ս «A Soldier on the Pencil: One of London's famous war correspondents,» The New York Times, August 10, 1887):

²⁷ St'u Williams Charles, The Armenian Campaign: A Diary of the Campaign of 1877, in *Armenia and Koordistan*, London: C. Kegan Paul & Co., 1878:

²⁸ Նույն տեղում, էջ 129:

²⁹ *Russian Atrocities in Asia and Europe*, p. 9.

³⁰ Նույն տեղում, էջ 62:

Փաստաթուղթ N94՝ «Ուշքիլիսեի եկեղեցում տասար դի է հայտնաբերվել: Գյուղերում հետաքննություն է սկսվել: Հայկական եկեղեցին այրվել է»³¹:

Խոսքն այստեղ օսմանյան Էրզրումի վիլայեթի Դիադինի գավառի Ուշքիլիսե (Ուշքիլիսա, թրք.՝ երեք եկեղեցի) գյուղի վանքի մասին է: Դա պատմական Բագավանի Ս. Հովհաննես վանքն է (VII դար): Այս եկեղեցու մասին հայկական աղբյուրներում զգալի նյութ կա, որը, սակայն, հիմնականում վերաբերում է նրա ձեռագրական հավաքածուին³²: Մյուս կողմից խոսքը Հովհաննես վարդապետ Աստվածատրյանի մասին է, որին 1882 թ. հանդիպել և նրա մասին տեղեկություններ է թողել այդտեղ ժամանած Մադաթիա եպիսկոպոս Օրմանյանը³³: Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ վանքի շուրջ տեղի ունեցած իրադարձությունների դիտարկումը թույլ է տալիս հասկանալ, որ թուրքական աղբյուրի այս տեղեկությունը ոչ միայն չի համապատասխանում իրականությանը, այլ նաև իրականում տեղի ունեցածի միտումնավոր նենգափոխումն է: Բանն այն է, որ մեր կողմից արդեն հիշատակված Չարիզ Նորմանը քննարկվող ժամանակահատվածում եղել է Սուրբ Հովհաննես եկեղեցում և զրույց ունեցել «ռուսների կողմից» բռնության ենթարկված և առևանգված հայ եպիսկոպոսի հետ: Այս առիթով նա գրում է.

«Ուշքիլիսեի եկեղեցում թաքնված տասար մարդ դաժանորեն սպանվել է: Ես գրուցել եմ տեղի հայ եպիսկոպոսի հետ, ով վրդովված ժպտում է, որ դա արել են ռուսները, - հայտարարություն, որ արվել էր Բամայիլ փաշայի կողմից և շրջանատության մեջ դրվել Բ. Դուսն կողմից Մեծ տերությունների համար,- և ով հանդիսավորությամբ հավասարիացնում էր ինձ, որ դա քրդերի ձեռքի գործն է, այն բանից հետո, երբ ռուսներն անցել են այդ վայրով»³⁴:

Այն, որ եկեղեցու վրա հարձակվել են մուսուլմանները, հաստատվում է նաև հայկական աղբյուրներով, մասնավորապես դեպքերի ժամանակակից ազգագրագետ Սարգիս Հայկունի Բագրևանդ գավառին նվիրված իր աշխատության մեջ հայտնում է հետևյալ տեղեկությունը.

³¹ Նույն տեղում:

³² Ուշքիլիսեի եկեղեցու մասին տեղեկություններ են պահպանվել պատմիչներ Ագաթանգեղոսի և Ղազար Փարպեցու աշխատություններում: Վերադառնալով քննարկվող ժամանակաշրջան՝ պետք է նշել, որ 1912 թ. Ն. Մառը Հ. Օրբելուն գործողում է Բագավանի եկեղեցի՝ նրա արձանագրությունները ուսումնասիրելու: Արդյունքներն ամփոփվում են հետևյալ աշխատանքներում՝ Орбели И. А., *Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторовские надписи VII века*, Петроград: Тип. Имп. Акад. Наук, 1913: Նույնի՝ *Багаванский храм и его надписи*, Петроград: Тип. Акад. Наук, 1917. Պատմաբան Պ. Մուրադյանը նշում է, որ Ուշքիլիսե անունը եթե եռախորան լինելու արձագանք չէ, ապա վկայությունն է երբևէ երեք եկեղեցու համաժամանակյա գոյության (տե՛ս Մուրադյան Պ., Դրվագներ Բագավանի ձեռագրական հավաքածուի պատմությունից, *Պարմա-բանասիրական հանդես*, 1999, 1 (150), էջ 195):

³³ Տե՛ս Օրմանեան Մադաթիա արքեպ., *Խոհք եւ խօսք. Իր կեանքի վերջին շրջանին մէջ*, Երուսաղեմ: Տպարան Սրբոց Յակոբեանց, 1929, էջ 117:

³⁴ Norman C. B., *Armenia and the Campaign of 1877...*, pp. 294-295.

«Այս հռչակատու վանքը ուներ ընտիր ձեռագրաց մատենադարան, որ պահուած էր վանքի որմերու մէջէն սանդուխներով դէպի գմբէթ բարձրացած մի դարանի մէջ. այս ձեռագիրներ ամբողջովին 77-ի պարերազմին վանքի մէջ թողուած են և ի կորուստ մատնուած: Մի ամենաընտիր ձեռագիր մագաղաթեայ Աստուածաշունչ քրդերու ձեռք կանցնի, կը բերեն Ղարս-բէկ հայ գիտն, կը դնեն վայր ու փայտով հարուածներ կտան ձեռագրին, որպէսզի հայեր մեծ գին տան, գերությունից ազատեն, կողոպտուած հայեր աստի անտի ցորեն հասաքելով կտան, կը ստանան Աստուածաշունչն»³⁵:

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ մագաղաթյա Աստվածաշունչը քրդերի ձեռքը կարող էր ընկնել միայն այն դեպքում, եթե թալանը նրանք և նրանց հովանավորող թուրքական իշխանություններն էին կազմակերպել:

Եզրահանգումներ

Օսմանյան կայսրության և նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդների հակասությունների խորացումը հանգեցրին 1875-1878 թթ. մերձավորարևելյան ճգնաժամին: Բալկաններում բռնկված ապստամբությունների, ինչպես նաև 1877 թ. բռնկված ռուս-թուրքական պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունները լայնորեն կիրառեցին թեն տեղական նշանակության, սակայն առանձին դեպքերում զանգվածային կոտորածներով հակահարված տալու միջոցը: Դրա անմիջական հետևանքն Արևմուտքի հասարակական-քաղաքական շրջանակներում հակաթուրքական տրամադրությունների ուժեղացումն էր, չնայած Օսմանյան կայսրությունը վայելում էր այդ տերությունների աջակցությունը Ռուսաստանի դեմ պատերազմում: Օսմանյան կայսրությունն այդ շրջանում հայտնվեց մի իրավիճակում, երբ պատերազմում կռվում էր Ռուսական կայսրության դեմ, իսկ միջազգային ասպարեզում՝ իր դեմ ստեղծված բացասական կերպարի չեզոքացման համար:

Ահա այս շրջանում է, որ Օսմանյան կառավարող շրջաններում ի հայտ են գալիս իրադարձություններին արձագանքելու հետաքրքիր մոտեցումներ: Մասնավորապես սկսվեց երկու թիրախ ունեցող մի մարտավարության կիրառում, որի դեպքում նախատեսվում էր համադրել ա) Արևմուտքում հակաթուրքական տրամադրություններին հակակշռի ստեղծումը և բ) պատերազմական ախոյանի՝ Ռուսաստանի վարկաբեկումը: Պետական երկու հրատարակությունների քննությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ նշված նպատակին հասնելու համար թուրքական իշխանությունները փորձել են լուծել մեկ գլխավոր խնդիր՝ ռուսներին մեղադրել այն բանում, ինչում մեղադրում էին իրենց: Այսինքն՝ ռուսական կողմին ներկայացնել խաղաղ բնակչության, հիմնականում մուսուլմանների, իսկ առանձին դեպքերում նաև քրիստոնյաների կոտորածների կազմակերպիչ: Այս մոտեցումը որոշ փոխակերպումներով օգտագործվել է նաև Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ

³⁵ Հայկունի Ս., *Բագրեւանդ ջրաբաշի գաւառ*, Մասն Ա., Վաղարշապատ: Տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1894, էջ 277:

երիտթուրքական քարոզչությունը սեփական մեղքերը սկսեց բարդել հիմնական զոհերի՝ հայության վրա:

Չնայած այն փաստին, որ բոլոր մեղադրանքներն ուղղված են ռուսական կողմին, այնուամենայնիվ արևմտահայությունը Կովկասյան ճակատին առնչվող հաղորդագրությունների կարևոր դերակատարներից մեկն է: Այսինքն՝ այս փուլում, երբ Հայկական հարցը դեռ նոր էր սկսում միջազգայնաձև, թուրքական կեղծարարությունների թիրախը չունեի այն ուժգնությունն ու ուղղվածությունը, որը ձեռք բերեց հետագա տարիներին: Սակայն այս հրատարակությունների քննությունը մեզ հնարավորություն է տալիս դեռևս այս շրջանում տեսնելու հետագայում պետական մակարդակի հասնող կեղծարարությունների և դրանց օգտագործման վաղ ձևերը:

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՈՒ ԿԱՅՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ.

1877– 1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ
ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վարդանյան Գևորգ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են ենթարկվում օսմանյան պատերազմական քարոզչության առանձնահատկությունները 1877 թ. լույս տեսած պետական երկու հրատարակություններում: Խնդիր ունենալով վարկաբեկելու թշնամուն՝ Ռուսաստանին, ինչպես նաև պայքարելու Արևմուտքում ծավալված հակաթուրքական տրամադրությունների դեմ՝ օսմանյան պետական քարոզչության մեջ սկսեցին ի հայտ գալ նոր մոտեցումներ, որոնք հետագայում զարգացվեցին և կիրառվեցին Առաջին աշխարհամարտի ժամանակ:

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, Ռուսական կայսրություն, հայեր, ռուս-թուրքական պատերազմ, Կովկասյան ճակատ, պատերազմական քարոզչություն, ցեղասպանության ժխտում:

ARMENIANS BETWEEN THE TWO EMPIRES: CAUCASIAN FRONT OF THE
RUSSO-TURKISH WAR OF 1877-1878 IN OTTOMAN WAR PROPAGANDA

Gevorg Vardanyan

SUMMARY

The article analyzes important features of the Ottoman war propaganda presented in two official publications of 1877. To blacken the enemy, as well as fight against anti-Turkish sentiments in Europe, the Ottoman war propaganda worked out new approaches, developed and applied during World War I.

Keywords: Ottoman Empire, Russian Empire, Armenians, Russo-Turkish War, Caucasian Front, war propaganda, genocide denial.

АРМЯНЕ МЕЖДУ ДВУМЯ ИМПЕРИЯМИ: КАВКАЗСКИЙ ФРОНТ
РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ 1877-1878 ГГ. В ОСМАНСКОЙ ВОЕННОЙ
ПРОПАГАНДЕ

Геворг Варданян

РЕЗЮМЕ

В статье проанализированы важные особенности османской военной пропаганды представленных в двух официальных изданиях, которые были опубликованы в 1877 году. Имея задачу очернить противника, а так же бороться против анти-турецких настроений в Европе, в османской государственной пропаганде появились новые подходы, которые потом совершенствовались и применялись во время Первой мировой войны.

Ключевые слова: Османская Империя, Российская Империя, армяне, русско-турецкая война, Кавказский фронт, военная пропаганда, отрицание геноцида.